§ø²Ô. ØÞ²ÎàôÚÂÆ °ì Ð²Ø²Ò²ÚÜàôÂÚàôÜÜºðÆ
¼²ð¶²òØ²Ü §ÞÆð²Î ÎºÜÎðàÜ¦ ÐÎ
“ÖÅÍÒÐ ÐÀÇÂÈÒÈß ÑÎÃËÀÑÈÉ È ÏÎËÈÒÈ×ÅÑÊÎÉ
ÊÓËÜÒÓÐÛ “ ØÈÐÀÊ”” OO

3104, ՀՀ, Գյումրի, Վարպետաց 176, 301 Հեռ. 0312 6-69-92, 055 06-69-92, 091 451337
E-mail: info@shirakcentre.org
Վեբ կայք. www.shirakcentre.org

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին

Դիմում-ուղերձ

Աղետի գոտում բնակարանների բաշխման կարգը սահմանող կառավարական որոշումներում փոփոխություններ կատարելու և մեկ ժամանակավոր կացարան տնօրինող բազմանդամ ընտանիքներին ևս առանց տնակը քանդելու նոր բնակարանը սեփականաշնորհելու հնարավորություն ընձեռելու մասին:

Պարոն վարչապետ

Աղետի գոտու բնակարանների բաշխման կարգում ՀՀ կառավարության 2011 թ. ապրիլի 14-ի նիստում կատարված փոփոխությունները, որոնցով այդ գոտու բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած բազմանդամ ընտանիքներին հնարավորություն տրվեց մեկից ավելի ոչ հիմնական շինություններ զբաղեցնելու դեպքում դրանցից մեկը բնակությունից չազատել և չքանդել, դրական ազդեցություն ունեցավ ինչպես բազմաթիվ բազմանդամ ընտանիքների բնակարանային պայմանները բարելավելու, այնպես էլ Մուշ-2 թաղամասի բնակեցումն արագացնելու հարցում: Սակայն այդ փոփոխություններում անտեսվել են այն ընտանիքների շահերն ու իրավունքները, որոնք թեև բազմանդամ են, սակայն չեն տնօրինում մեկից ավելի տնակ, ուստի նրանց կողմից տնօրինվող ոչ հիմնական շինությունները ենթակա են ամբողջովին քանդման: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ բազմանդամ ընտանիքները մի կերպ բնակվել են միևնույն ժամանակավոր կացարանում կամ ընտանիքի անդամների մի մասը երկար տարիներ բնակվել է վարձով բնակարաններում:

Աղետի գոտում բնակարան ստացած՝ մեկից ավելի տնակներ ունեցող բազմանդամ ընտանիքներին արտոնության տրամադրումը, իսկ մեկ տնակ ունեցող բազմանդամներին դրա չտրամադրումը նշանակում է, որ նախկինում բնակվելու համեմատաբար տանելի պայմաններ ունեցած ընտանիքի բնակության պայմաններն ավելի բարելավվելու են, այդպիսիք չունեցածներինը՝ ոչ…

Ներկայումս, երբ ընթանում է նախորդ տարի Մուշ-2 թաղամասում բնակարաններ ստացած ընտանիքների կողմից ժամանակավոր կացարաններից տարածքների ազատման և նոր բնակարանների սեփականաշնորման գործընթացը, մեր դիտարկումները ցույց են տալիս, որ անլուծելի խնդրի առաջ են կանգնել բազմանդամ, սակայն մեկ տնակ տնօրինող տասնյակ ընտանիքներ, որոնք, մեծ ցանկության դեպքում անգամ, պարզապես չեն կարող բնակվել մեկ բնակարանում, իսկ նրանց նոր բնակարանները սեփականաշնորել չի թույալատրվում, քանի որ չեն քանդել իրենց տնակները:

Պարոն վարչապետ

Դիմում ենք Ձեզ՝ ակնկալելով, որ ևս մեկ անգամ կնախաձեռնեք փոփոխություններ կատարել աղետի գոտում բնակարանների բաշխման կարգը սահմանող որոշումներում և իրենց նոր ստացած բնակարանները սեփականաշնորհելու հնավորություն կընձեռվի նաև այն բազմանդամ ընտանիքներին, որոնք տնօրինում են ընդամենը մեկ տնակ: Այդ քայլով որոշ չափով կբարելավվեն նրանց կացարանային պայմանները, ինչպես նաև հավասար հնարավորություններ կտրամադրվեն բազմանդամ բոլոր ընտանիքներին:

«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ՝ Վահան Թումասյան

2011 թ. սեպտեմբերի 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

37510, ք.Երևան, Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
37510, г.Ереван,пл.Республики,
Дом Правительства 3
Government House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 523200
www.mud.am
E-mail info@mud.am

11.10.2011թ. N 03/13.1/4952-11

Ձեր N ---------- առ ----------

ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի,
<Շիրակ կենտրոն> ՀԿ նախագահ
պարոն Վ.Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան

Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղված և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N 02/24.12/15596-11 գրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն վերահասցեագրված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին ուղղված Ձեր՝ 2011 թվականի սեպտեմբերի 15-ի նույնաբովանդակ դիմում-ուղերձների կապակցությամբ հայտնում եմ.

դիմում-ուղերձներով արված՝ ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություն կատարելու և ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան ստացած, մինչև բնակարան ստանալը մեկական ոչ հիմնական շինություն զբաղեցրած բազմանդամ ընտանիքներին՝ առանց իրենց կողմից զբաղեցված ժամանակավոր կացարանները քանդելու հատկացված բնակարանները սեփականաշնորհելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ առաջարկությունը քննարկվել է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների

(բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 27-ին Գյումրի քաղաքում կայացած նիստում՝ Ձեր մասնակցությամբ:

Քննարկման արդյունքներով վերը նշված առաջարկության ընդունումը հանձնաժողովի կողմից համարվել է ոչ նպատակահարմար:

Հարգանքով

Ա.Հակոբյան

Ս.Սրապյան
52-09-43